

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/10**

**22 մարտի 2016 թ.**

Քննարկվեց «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ տնօրենի ժ/պ 23.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.02.2016թ-ի թիվ 311650 որոշման դեմ:

#### **«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ տնօրենի ժ/պ գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության կողմից կազմված վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 311650 որոշումն անհիմն է, քանի որ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատող Ադիբեկ Բադիշի Սարգսյանի «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտը» (այսուհետ աշխատողի գրանցման հայտ) հանձնվել է դեռ 2013թ-ի փետրվարի 21-ին՝ եկամտային հարկի հաշվետվության էլեկտրոնային տարբերակը ձևավորելու ժամանակ:

Նշվում է նաև, որ 2013թ. նոյնականացման քարտերի տրամադրման տեխնիկական խնդիրների հետ կապված աշխատողների գրանցման հայտերի և եկամտային հարկի հաշվետվությունների ներկայացման ժամկետները երկարաձգվել են և պատասխանատվությունը կիրառվելու էր 20.03.2013թ-ից հետո չներկայացված հայտերի և հաշվետվությունների նկատմամբ:

Ադիբեկ Բադիշի Սարգսյանը 1998թ-ից աշխատում է «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ում, 2013թ-ից նրա յուրաքանչյուր ամսվա աշխատավարձի մեծությունը և եկամտային հարկը արտացոլվել են եկամտային հարկի հաշվետվություններում (ինչը անհնար է աշխատողի գրանցման հայտ չներկայացնելու պարագայում): Քանի որ աշխատողների գրանցման հայտում նախքինում ներկայացված տվյալներում 2015թ. դեկտեմբեր ամսում հայտնաբերվել են սխալներ 2015թ. դեկտեմբերին աշխատողի գրանցման հայտում կատարվել են ուղղումներ և ներկայացվել ՏՀՏ: Ներկայացված գրանցման հայտում աշխատանքի մասին նախքինում սխալ հանձնված տեղեկությունները էլեկտրոնային համակարգում չեն պահպանվել, ինչը հիմք է հանդիսացել համարելու, որ վերը նշված աշխատողի համար գրանցման հայտ չի ներկայացվել, իսկ 2015թ. դեկտեմբերին ներկայացվածը դիտվել է ուշացած:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գանգատաբերը գտնում է, որ նշված որոշումը անհիմն է և ենթակա է վերանայման:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 29.01.2016թ-ի 104 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ նախագահ Աշոտ Գնդոյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացողի գրանցման հայտը, որի համար նախատեսված է

պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով: Արդյունքում, ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 10.02.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 311650 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Աշոտ Գնդոյանին վարչական տույժի ենթարկելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ադիբեկ Սարգսյանը 1998թ-ին «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ում ձևակերպվել է որպես վարձու աշխատող և ղեկավարվելով «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով պարտավոր էր 2013թ-ի փետրվարին ներկայացնել «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի գրանցման հայտ»: Սակայն, նշված հայտը ներկայացվել է միայն 2015թ-ի դեկտեմբեր ամսին: Արդյունքում, վերոգրյալ Որոշմամբ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ նախագահ Աշոտ Գնդոյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Որոշումը կայացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված պահանջների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Քննարկվող դեպքում Ադիբեկ Սարգսյանի վերաբերյալ «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի գրանցման հայտը» պետք է ներկայացվեր 2013թ-ի փետրվար ամսին, սակայն այն ներկայացվել է 2015թ-ի դեկտեմբեր ամսին: Այսինքն, համապատասխան խախտումը թույլ է տրվել 2013թ-ի փետրվար ամսին, որի համար «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ նախագահ Աշոտ Գնդոյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել միայն 2016թ-ի փետրվար ամսին: Այսինքն, քննարկվող դեպքում վարչական տույժը նշանակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ, այն է՝ իրավախախտումը կատարվելու օրվանից երկու ամիս հետո ընկած ժամանակահատվածում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.02.2016թ-ի թիվ 311650 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

**Հանձնաժողովի նախագահ՝**

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**